

**ՎԱՆՈՒՀԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայցորդ

ՀՏԴ 81' 374 (091)

**ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ 19-ՐԴ ԴԱՐԻ ԱՆԳԼԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ  
ԲԱՌԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

**Բանալի բառեր.** բառարանագրության պատմություն, բառարանի կառուցվածք, գլխաբառեր, թարգմանություն, պատճենում, լեզվական առնչություններ:

**Ключевые слова.** история лексикографии, структура словаря, заглавное сово (в словаре), перевод, калькирование, языковые связи.

**Key words.** history of dictionary writing, structure of dictionary, topic vocabulary, translation, copy (dublication), language meanings (references).

Անգլերենի այդքան արագորեն տարածումը և հայերենի վրա ունեցած ազդեցությունը մեզ համար հիմք դարձան ուսումնասիրելու անգլերեն-հայերեն բառարանագրության պատմությունն ու կարևորությունը 19-րդ դարում:

Մեր խնդիրն է պարզել՝ տվյալ ժամանակաշրջանում ի՞նչ հայտնի բառարաններ են լույս տեսել, ո՞րն է նրանց կարևորությունը, բառհոդվածների ի՞նչ ծավալ են ունեցել նրանցից յուրաքանչյուրը, հատկապես ո՞ր տարածաշրջաններն էին ակտիվ անգլերեն-հայերեն բառարանների ստագրության գործում:

Մեր նպատակն է ցույց տալ այդ աշխատությունների արժեքը, կարևորությունը հայ երկլեզվյան բառարանագրության զարգացման գործում, տալ նրանց նկարագիրը:

Այսպիսով՝ բառարանն ամեն մի լեզվի բառապաշարն ամբողջացնող շտեմարանն է, որում բառերը և հարակից միավորները մեկտեղվում են որոշակի սկզբունքներով:

Հայ բառարանագրության պատմությունը ընդունված է բաժանել հետևյալ շրջանների.

- 1) նախնական շրջան (5-9-րդ դարեր),
- 2) միջնադարյան շրջան (10-16-րդ դարեր),
- 3) նոր շրջան (17-19-րդ դարեր),
- 4) նորագույն շրջան (20-րդ դարից առ այսօր)[1]:

Առանձնացվում է բառարանների երկու մեծ խումբ հանրագիտական և բանասիրական (լեզվաբանական):

Բանասիրական (լեզվաբանական) բառարանները իրենց հերթին լինում են. բացատրական, ստուգաբանական, տեղանունների, հոմանիշների, հականիշների, դարձվածաբանական, թարգմանական (որը լինում է երկլեզվյան և բազմալեզվյան) և այլն:

Անգլերեն-հայերեն առաջին բառարանի հեղինակն է Մ. Սիմեոնյանը («Փոքրիկ բառագիրք Անգղիացուց լեզուն՝ թարգմանեալ ի հայ բարբառ», 1803 թ., Մադրաս): Այն պարունակում է 5000 բառհոդված: Քանի որ հնդկահայ այդ գաղութում պետական լեզուն անգլերենն էր, և բազմաթիվ հայեր ուզում էին սովորել անգլերեն, բայց շատ բառերի բացատրություններ անհասկանալի էին, հետևաբար պահանջվեց երկլեզվյան (անգլերեն-հայերեն կամ հայերեն-անգլերեն) բառարանի ստեղծում: Աշխատությունն ունենալու էր գործնական նշանակություն և ծառայելու էր իբրև «գրուցատրություն»[2]:

Բառարանն ունի հետևյալ կառուցվածքը. աշխատության սկզբում բառերի գործածության անհրաժեշտության վերաբերյալ բացատրություններից հետո հեղինակը բերում է կրոնական նշանակության բառերի օրինակներ, ինչպես՝ *Աստված, Սուրբ հոգի, Սուրբ Հիսուս Քրիստոս, Փրկիչ, Ազատիչ, Դրախտ, Սուրբ երրորդություն* և այլն: Կրոնական բնույթի բառհոդվածները 38-ն են: Այնուհետև հաջորդում են բառացանկեր, որոնք առանձնացված են ըստ թեմաների: Օրինակ՝ «Յաղագս պտղոց և պտղատու ծառոց» բաժնում տրված են նման բառերի նշանակությունները. *արմաւենի, նարինջ, վարդախնձոր, թուրթ, ձիթենի, կիտրոն, կիտրոնենի, դեղձ, դեղձենի, բալ, նուշ, շլոր, շլորենի, նուռ, նոնենի, տանձ, տանձենի, խնձոր, խնձորենի, թուզ, թզենի, շագանակ, շագանակենի, կեռաս, կեռասենի* և այլն: Առանձին թեմաներ են նաև «Յաղագս աուրց շաբաթու», որ, ենթադրելի է, պարունակում է 7 բառ, «Յաղագս տարերաց»՝ 4 բառ, «Յաղագս աստեղաց»՝ 35 բառ, «Յաղագս ժամանակի»՝ 32 բառ և այլն:

Այբբենական հաջորդականությամբ բառերի շարքը սկսվում է միայն 68 էջից: Բառերի հոմանիշներն իրարից առանձնանում են ստորակետով, *կամ* բառով, իրարից տարբեր իմաստները՝ միջակետով, *ևս* բառով: Բառարանն ավարտվում է հավելվածներով, որոնք ևս այբբենական հաջորդականությամբ են դասավորված:

Քանի որ բառարանը գործնական նպատակ ուներ, և ինչպես հեղինակն է նշում, բառարանագրական փորձ չի ունեցել, հետևաբար այն չէր կարող գերծ լինել որոշ թերություններից: Հեղինակն ինքն էլ հետագա քննադատություններին իբրև նախօրոք տրված պատասխան՝ գրել է, թե չնայած արժանի չէ այս գործին, սակայն ուժերի կարողության չափ ձեռնարկում է լեզվագիտական այդ փոքրիկ աշխատանքը:

Հաշվի առնելով այս բառարանի ծավալի փոքր լինելը և ժամանակի լեզվական շփումների ընդլայնումը՝ կարող ենք ենթադրել, որ լեզվագետների համար հրամայական դարձավ առավել ընդգրկուն, ամբողջական աշխատության հրատարակումը: Այսպիսով՝ 1821 թ. Վենետիկում լույս է տեսնում «Բառարան անգլիերեն և հայերեն-Dictionary English and Armenian»[3] աշխատությունը, որը պիտի դառնար 19-րդ դարի անգլերենին առնչվող թերևս ամենաթեքավոր բառարանը: Այսպես, Գ. Գասպարյանը Հ. Ավգերյանի այս աշխատանքի մասին գրում է. «Անգլերենին առնչված բառարանի հեղինակային փաստական առաջնությունը թեկուզ պատկանում է Մկրտում Սիմեոնյանին, բայց Հարություն Ավգերյանի բառարանը իր բովանդակությամբ և բառարանագրական մշակման կողմով շատ բարձր է և ունի իրավական առաջնության իրավունք»[4]:

Վերջինս ունի հետևյալ կառուցվածքը. սկսվում է առաջաբանով, որտեղ հեղինակը պատմում է աշխատության ստեղծման մասին:

Լորդ Բայրոնը և Էդուարդ Լոմբը օժանդակել են կազմել և հրատարակել անգլերեն-հայերեն և հայերեն-անգլերեն երկու բառարանները<sup>1</sup>, որոնք օգտակար են երկու լեզուների համար էլ[5]: Հ. Ավգերյանը անգլերեն գլխաբառերի համար որպես աղբյուր ընտրել է «գրառարանն Ջոնսոն (Johnson) գերահռչակ մատենագրի» [6]:

Առաջաբանում հեղինակը խոսում է նաև այդ ժամանակ եվրոպական լեզուների շրջանում անգլերենի կարևորության մասին: Բառերը դասավորված են այբբենական հաջորդականությամբ, փակագծերում հայերեն տառադարձությամբ տրվում է բառի արտասանությունը, խոսքիմասային պատկանելությունը, այնուհետև՝ հայերեն բացատրությունը: Բառարանում բերվում են նաև գլխաբառերով սկսվող կապակցություններ: Օրինակ՝

«Calabash tree փելեպէշ թրի գ. Ծառ յորոյ կեղևոյ յօրինեն Հնդիկք գործիս»[7]:

<sup>1</sup> Այս մասին հեղինակը գրում է բառարանի առաջաբանում. «Such aid and encouragement it has found in the kindness of some English gentlemen. Among these we are proud to name, Lord Byron, the most distinguished of the English poets even in the present splendid age of English poetry, who after having studied Armenian among us, induced us to publish a short Armenian Grammar of the English tongue for the use of Armenians, and also assisted us in the composition of an English grammar of the Armenian tongue for the use of his own countrymen. Edward Lombe Esquire a young gentleman of distinguished talents and fond of the study of languages, afterwards induced us to print the letter»: Տե՛ս, Հ. Ավգերյան, Բառարան անգլիարեն եւ հայերեն, Վենետիկ, 1821, էջ 7-8:

«Heave offering, -օֆֆըրինգ գ. Երախայրիք, նուեր երախայրեաց»[8]:

«Hamp agrimony հեմփ էկրիմընի գ. Բոյս»[9]:

«Hippocrates'a sleeve հիփփօքրէյդ սըլիվ գ. Պարզուտ ինչ  
զեղագործաց»[10]: «Hocus pocus Հօքրս փօքրս գ.

Ձեռնածութիւն, խաբէութիւն»[11]:

«Hodge podge Հօժ փօժ գ. Յօշածոյ խորտիկ այլալ հանդերձանք»[12]:

«Hoodman blind հուատմէն պլայնտ գ. Խաղ ինչ (աչկապուկ)»[13]:

Եթե բառն ունի գրության կամ արտասանության տարբերակներ, հեղինակը նշում է դրանք՝ առանց որևէ մի ձևին առաջնությունը տալու: Օրինակ՝ «Calculose կամ Calculous քէլքվոուլօս, քէլքվոուլըս ած. Խճային, աւազային»[14]:

Որպես գլխաբառ հանդիպում են նաև որոշ բառերի քերականական թեքված ձևեր. անկանոն գոյականները հոգնակի թվով, բայերը՝ դերբայական ձևերով: Օրինակ՝

«Teeth...Յոգն. Tooth բառի»[15]:

«Men մէն Յոգն. Man բառի»[16]:

«Mice մայս Յոգն. Mouse բառի»[17]:

«Geese Յոգնական Goose բառի»[18]:

«Lice լայս Յոգն. Louse բառի»[19]:

«Feed ֆիդ Յոգնական Foot բառի»[20]:

«Ate էյտ է կատարեալ ժամանակ բայիս To eat»[21]:

«Was ուօգ. Կատարեալ ժամանակ to Be բայի»[22]:

«Became պիքէյմ Կատարեալ ժամանակ to Become բայի»[23]:

«Blew պլիոու Կատարեալ ժամանակ to Blow բայի»[24]:

«Chose չօգ Կատարեալ ժամանակ to Choose բայի»[25]:

«Drank տրէնք Կատարեալ ժամանակ to Drink բայի»[26]:

«Flew ֆլիոու Կատարեալ ժամանակ to Fly բայի»[27]:

Կան բազմաթիվ բարդ բառեր էլ, որոնք հայերեն թարգմանված են իբրև կապակցություններ: Հարկ է նկատել, որ այդ առումով այս ստվարածավալ բառարանը իր լուրջ ազդեցությունն է ունեցել հայերենի բառապաշարի հարստացման գործում:

Այս բառարանում անգլերենից հայերեն բարդ բառերը պատճենման միջոցով թարգմանվում-բացատրվում են բառակապակցություններով: Ա. Մէյեն գրում է, որ Եզնիկը համադաս երեք բառ է օգտագործում հունարեն «որակ» բառը թարգմանելու համար[28]: Այդ կապակցությունները երբեմն

շարադասությամբ նույնն են, ինչ անգլերեն համապատասխան բառի բաղադրիչների շարադասությունը: Սակայն երբեմն այդ շարադասությունը փոխվում է, դառնում շրջուն, որովհետև հարկ է, որ տվյալ կապակցությունը դրսևորվի տվյալ հանրության լեզվամտածողությանը հատուկ ձևերով: Այսպիսով՝ մեզ հանդիպել են ն՝ նույնատպ, ն՝ շրջուն շարադասությամբ թարգմանություններ:

Բառերն ընտրել ենք՝ հիմք ընդունելով «Նոր բառգիրք հակագեան լեզուի» բառաֆոնը (այսուհետ՝ ՆՀԲ) [29]:

*Նույնատիպ շարադասությամբ բառակապակցությունների օրինակներ:*

Aforenamed ած. Յառաջագոյն անուանեալ կամ ասացեալ:

*Afore* նշանակում է «առաջի», «նախ քան», «յառաջ քան», *name՝* «անուն»:

Aforesaid ած. Յառաջագոյն կամ նախ ասացեալ:

*Յառաջագոյն* բառի բացատրության մեջ, իբրև մակբայ կա «յառաջագոյն ասել, կամ պատմել» արտահայտությունը:

Aforetime մ. Յառաջագոյն, կանխաւ, յանցեալ ժամանակս:

«Յանցեալ ժամանակս» պատճենումային թարգմանություն է:

Մի շարք օրինակներ կան՝ կազմված «after» արմատով, որն ունի մի քանի նշանակություններ, ինչպես՝ «հետո», «նորից», «կրկին» և այլն:

Afterbirth գ. Աղտ տղայոց:

Սա «ընկերք» բառն է: *Birth* նշանակում է «ծին»: «Մինչև ծնվելը» բառացի թարգմանություն է:

Aftercost գ. Նորոգ կամ 'կրկին ծախք:

*Cost* նշանակում է «արժենալ»: After (կրկին)+cost (արժենալ):

Aftercrop գ. Կրկին հունձք:

*Crop* նշանակում է «հունձք»: After (կրկին)+ crop (հունձք):

To Aftereye ք, ն. Ունել առաջի աչաց, զգուշանալ:

«Ունել աչքի առաջ» արտահայտությունը պատճենումային թարգմանություն է: *After* թարգմանվում է «առաջ», *eye՝* «աչք»:

Aftergame գ. Կրկին կամ վերստին հնարք:

«Game» նշանակում է «մրցախաղ», «ծրագիր», «գործելակերպ»: After (կրկին)+game (ծրագիր):

Aftermath գ. Կրկին հունձք խոտոյ, հունձք աշնայնոյ:

«Math» արմատը «Ընդարձակ Բառարան անգլիերեն-հայերեն» բառարանում ունի «հունձք» նշանակությունը: After (կրկին)+math (հունձք):

Afternoon գ. Զկնի հասարակ աւուր:

*Noon* նշանակում է «կեսօր», «միջօրէ»: «Ձկնի» բառը՝ ըստ ՆՀԲ-ի՝ որպէս նախդիր նշանակում է «զիտ», «յետոյ քան»: *After* (հետո)+*noon* (կեսօր):

*Afterpart* գ. Երկրորդ կամ յետին մասն:

Այստեղ «*after*» արմատը թարգմանվում է նաև «երկրորդ» իմաստով: «*Part*» նշանակում է «մաս», «բաժին», «դեր», «կողմ»: *After* (երկրորդ)+*part* (մաս):

*Aftentimes* գ. Յետագայ կամ առյապա ժամանակք, ապառնիք:

«Ապառնիք» բառ ՆՀԲ-ում կա: Սակայն բառի առաջին բացատրությունը ևս պատճենումային թարգմանություն է: *After* (հետո, հետագա)+*time* (ժամանակ):

Այս խմբում կան նաև անջատ գրվող բաղադրիչներով թարգմանություններ: Այդպիսիք են.

*After-all* մ. Ձկնի, կամ 'ի վախճան ամենայնի, 'ի վախճանի, հուսկ յետոյ, ապա:

«Հուսկ յետոյ», «ի վախճան ամենայնի» արտահայտությունները պատճենումային թարգմանություններ են:

*Aurum fulminans* գ. Ոսկի շանթաձիգ (է բաղադրութիւն ինչ քիմիական):

*Aurum* նշանակում է «ոսկի», *fulminans*՝ «շանթ», «կրակ»:

*All-fours* գ. Համայն չորս կամ չորք ողջոյն (է խաղ ինչ թղթոյ):

*All* նշանակում է «բոլոր», «ամբողջ», «ամեն ինչ», «համայն», *four* չորս: Այս բառը բացատրվում է ն՝ նույնատիպ, ն՝ շրջուն շարադասությամբ կապակցություններով:

*All-hallow* կամ *All-hallows* գ. Ամենայն Սուրբք, տօն ամենայն Սրբոց:

*All* արմատի նշանակություններն արդեն նշել ենք: *Hallow* նշանակում է «պաշտել», «սրբացնել»:

Նույն կերպ է բացատրվում նաև հետևյալ բարդությունը.

*All-hallown* ած. Ամենայն Սրբոց, որ հայի՝ 'ի ժամանակն տօնի ամենայն Սրբոց:

*Շրջուն շարադասությամբ բառակապակցությունների օրինակներ:*

*Afterpains* գ. Յաւք զկնի երկանց կամ ծննդեան:

«*Pain*» նշանակում է «ցաւ», «պատիժ», «վիշտ»: *After+pains* և *ցաւք+զկնի* (երկանց կամ ծննդեան). ցավեր երկունքից հետո:

*Afterproof* գ. Երկրորդ ցուցումն, վերջին փորձ:

Այստեղ «*after*» արմատը թարգմանվում է «վերջին» իմաստով: «*Proof*» նշանակում է «ապացոյց», «փաստ», «փորձ»: *After* (վերջին)+*proof* (փորձ):

*Aftertaste* գ. Համ զկնի ճաշակառութեանն:

*Taste* նշանակում է «համ»: Այստեղ ևս կա շրջուն շարադասություն.  
after+taste և համ+զկնի:

*Afterthought* գ. Խորհուրդ անագան:

*Though* նշանակում է «խորհուրդ», «մտածում», «միտք», «խորհրդածություն»:

«Անագան», ըստ ՆՀԲ-ի, նշանակում է «ոչ կանուխ», «յետին»: Այս արմատի նշանակությամբ բացատրվում է նաև «afterwit» բառը:

*Afterwit* գ. Հանճար կամ հնարք անագան:

*Wit* նշանակում է «միտք», «խելք», «իմաստություն», «ուշիմություն», «հանճար» և այլն:

*Alewife* գ. կին որ վաճառե՝ ի տան իւրում զգարեջուր:

*Ale* նշանակում է «զարեջրի տեսակ», *wife*՝ «կին»:

Բաղադրիչների անջատ գրությամբ որոշ բառեր այստեղ ևս կան:

*Aethiops-mineral* գ. Հանք Եթովպացուց (է անուն սևորակ ինչ գեղոյ):

*Aethiops* (եթովպիացիներ) + *mineral* (հանք, հանքաքար):

*Ague-fit* գ. Ըմբռնումն տենդի:

*Ague* թարգմանվում է «դող», «ջերմ»: «Fit» նշանակում է «նոպայ», «պոռթկում»:

*Abraham's balm* գ. Է խոտ ինչ (բալասան Աբրահամու):

*Balm* նշանակում է «բալասան»: Դասական հայերենի մտածողությամբ այն շրջուն շարադասություն ունի, սակայն արդի հայերենում թարգմանվում է «Աբրահամի բալասանը»:

*Audience court* գ. Ատենան ունկնդրութեան արքեպիսկոպոսին Կանդաքրիկիոյ:

*Audience* նշանակում է «ունկնդիր», իսկ *court*՝ «դատարան»:

*All-hail* գ. Ողջոյն համայն, ողջոյն ամենեցուն, ողջ լերութ:

*All* նշանակում է «բոլոր», «ամբողջ», «ամեն ինչ», «համայն», *hail*՝ «ողջուն», «բարեմաղթանք»:

*Amber-drink* գ. Ըմպելիք՝ ի գոյն սաթի:

*Amber* բառը թարգմանվում է «բազմագունի ակն, սաթ», իսկ *drink*՝ «խմիչք»: *Amber* (սաթ) + *drink* (խմիչք):

*Amber-seed* գ. Սերմն սաթի (ունի զննամութիւն կորեկի):

*Amber* (սաթ) + *seed* (սերմ):

*Amber-tree* գ. Ծառ սաթի (է ծառատունկ ինչ):

*Amber* (սաթ) + *tree* (ծառ):

Այսպիսով՝ Հ. Ավգերյանի այս աշխատությունը գիտական սկզբունքների պահպանման և ընդգրկուն լինելու շնորհիվ երկար տարիներ ծառայել է ոչ միայն երկու լեզուները սովորելու նպատակին, այլ նաև եղել է որպես թարգմանությունների աղբյուր շատ լեզվագետների համար:

1868 թ. Մ. Պետրոսյանը վերամշակել, խմբագրել և վերահրատարակել է Հ. Ավգերյանի այս աշխատությունը:

Անգլերեն-հայերեն բառարանագրական աշխատանքները շարունակվեցին Կալկաթայում: 1825 թ. Հ. Ավդալյանը այնտեղ տպագրեց Հ. Ավգերյանի «Անգլիերեն-հայերեն» բառարանի համառոտագրությունը:

1835 թ. Վենետիկում Ս. Սումալյանը հրատարակում է «Բառարան համառոտ անգլիերեն-հայերեն» աշխատությունը:

Անգլերենին առնչվող բառարաններ էին տպագրվում նաև Կ. Պոլսում: Այսպիսով՝ 1865 թ. հրատարակիչ Ե. Մինասյանը հրատարակում է «Անգլո-հայ և հայ անգլերեն աշխարհագրական բառարարանը» (part 1. English into Armenian, part 2. Armenian into English): Երկու հատորներն էլ պարունակում են 1800-ական բառահոդվածներ:

1894 թ. Կ. Պոլսում Վ. Հակոբյանը հրատարակում է «Բառարան անգլերեն և ի հայ» աշխատությունը, որը կազմված էր 430 էջից (20-րդ դարի նախասկզբին՝ 1907 թ.-ին, Կ. Պոլսում այն հրատարակվեց արդեն 1045 էջով և 45000 բառհոդվածով):

19-րդ դարի անգլերեն-հայերեն բառարանագրական աշխատանքները ամփոփվում են վերջին 1899 թվականին Նյու-Յորքում Պ. Թորոսյանի հեղինակած «Առձեռն ամերիկյան բառարան անգլիերեն և հայերեն» աշխատությամբ, որը պարունակում է 25000 բառհոդված և կազմված է 368 էջից:

Հաշվի առնելով մեր ուսումնասիրության լայնածավալ լինելը՝ բոլոր բառարանները ներկայացնել ընդամենը մեկ հոդվածով չենք կարող, ուստի նշալ վերջին բառարանների մասին կխոսենք հաջորդ ուսումնասիրություններում:

#### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.Վ. Համբարձումյան, Ակնարկներ հայ բառարանագրության պատմության, Երևան, 2015, էջ 12:

2.Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 151:

3.Հ. Ավգերյան, Բառարան անգլիարեն և հայերեն, Վենետիկ, 1821:

4.Գ. Գասպարյան, Հայ բառարանագրության պատմություն, Երևան, 1968, էջ 152:

5.Գ. Գասպարյան, նույն տեղում, 152:

6.Հ. Ավգերյան, Բառարան անգլիարեն և հայերեն, Վենետիկ, 1821, էջ 12:

7.Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 104:

8.Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 357:

9.Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 359:



- 
10. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 363:  
 11. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 364:  
 12. Հ. Ավգերյան, նույն տեղում:  
 13. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 367:  
 14. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 103:  
 15. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 713:  
 16. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 458:  
 17. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 461:  
 18. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 328:  
 19. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 432:  
 20. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 294:  
 21. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 791:  
 22. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 68:  
 23. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 82:  
 24. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 129:  
 25. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 244:  
 26. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 246:  
 27. Հ. Ավգերյան, նույն տեղում, էջ 304:  
 28. Ա. Մեյե, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978, էջ 504:  
 29. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836:

#### Վ. Բաղդամյան

#### Դիտարկումներ 19-րդ դարի անգլերեն-հայերեն բառարանների վերաբերյալ ԱՄՓՈՓՈՒՄ

19-րդ դ. անգլերենի տարածմանը զուգընթաց հրամայական դարձավ անգլերենին առնչվող բառարանների ստեղծումը: Բառարաններից յուրաքանչյուրն առանձնանում է իր կառուցվածքով, գլխաբառերի դասավորությամբ, քերականական իրողությունների ներկայացմամբ, յուրաքանչյուրի բառամթերքը ընտրված է ավելի վաղ շրջանում տպագրված որևէ այլ աշխատության բառաֆոնդի հիման վրա: 19-րդ դ. տպագրված նշյալ բառարանները, անշուշտ, իրենց լուրջ ազդեցությունն են ունեցել հայերենի ընդհանուր բառապաշարի հարստացման գործում:

**В. Баграмян**

**Обзор англо-армянских словарей 19-го века**

**РЕЗЮМЕ**

В 19-м веке параллельно повсеместному распространению английского языка, создание словарей по языку было требованием номер один. Каждый из словарей отличается своей структурой, расположением заглавных слов, представлением грамматических реалий, словарный фонд каждого из них выбирался на основе ранее опубликованных словарей. Словари, опубликованные в 19-м веке, конечно, серьезно повлияли на обогащение основного словарного фонда армянского языка.

**V. Baghramyan**

**Overview of the english-armenian vocabularies of the 19th century**

**SUMMARY**

In the 19th century parallel to the overall expansion of the English language, the creation of English vocabularies was obligatory. Each of the dictionaries differs in its structure, arrangement of capital words, presentation of grammatical realities; the selection of each vocabulary fund was based on previously published ones. The dictionaries published in the 19th century, had serious influence on the enrichment of the main vocabulary fund of the Armenian language.